

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել: Մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք www.fastbank.am հասցեով, դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ (+374 10) 510 000 հեռախոսահամարով:

RESTART AGRO ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԱՐԿԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ		
Վարկառու	18-65 տարեկան ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր	
Վարկի նպատակ	ՀՀ այլ բանկերում (այդ թվում՝ ֆինանսական հաստատություններում) գործող գյուղատնտեսական գործունեության իրականացմանն ուղղված /վարկառուի և/կամ համատեղ տնտեսություն վարող անձանց/վարկերի վերաֆինանսավորում, գյուղատնտեսական գործունեության զարգացում *	
Վարկի տեսակ	Վարկ	
Վարկի արժույթ	ՀՀ դրամ	
Վարկի գումար	Միայն երաշխավորությամբ ապահովված վարկեր (այդ թվում լրացուցիչ վարկի գումարը)	Անշարժ գույքի գրավով ապահովված վարկեր (այդ թվում լրացուցիչ վարկի գումարը)
	1,000,000 - 10,000,000 ՀՀ դրամ	10,000,001 - 150,000,000 ՀՀ դրամ
Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք **	Այլ ֆինանսական հաստատությունից տեղափոխվող վարկի/երի միջին կշռված անվանական տոկոսադրույք -2%՝ նվազագույնը 15%	Այլ ֆինանսական հաստատությունից տեղափոխվող վարկ/երի միջին կշռված անվանական տոկոսադրույք -2%՝ նվազագույնը 13,5%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	16.1-23.79%	13.8-23.79%
Վարկի ժամկետ	24-84 ամիս	

Մայր գումարի մարման արտոնյալ ժամկետ	0-18 ամիս՝ կախված բիզնեսի առանձնահատկություններից	
Լրացուցիչ վարկի գումար ***	Վերաֆինանսավորվող վարկի մնացորդի մինչև 40%-ի չափով	
Վերաֆինանսավորվող վարկի/երի նկատմամբ պահանջներ	Մինչև 10 մլն ՀՀ դրամ գումարի վարկերի դեպքում (այդ թվում լրացուցիչ վարկի գումարը)	10 մլն ՀՀ դրամ գումարը գերազանցող վարկերի դեպքում (այդ թվում լրացուցիչ վարկի գումարը)
	Բանկի կողմից իրականացվում է Վարկառուի գործունեության վայր այցելություն, իրականացվում են լուսանկարներ: ****	Բանկի կողմից Վարկառուի գործունեության վայր այցելությունը ըստ անհրաժեշտության, Հաճախորդի կողմից ներկայացվում են գործունեության վայրից լուսանկարներ:
	Անկախ վարկի գումարի մեծությունից՝ Բանկի կողմից վարկը տրամադրվում է առանց Վարկառուի ֆինանսատնտեսական ցուցանիշների վերլուծության, եթե պահպանվում են ստորև պայմանները միաժամանակ՝ - վերաֆինանսավորվող /Լրացուցիչ վարկի գումարի մեջ չներառված/ վարկը/երը այլ ՀՀ բանկերում կամ ֆինանսական հաստատություններում սպասարկվում է/են նվազագույնը 12 ամիս (1-ից ավել վարկերի դեպքում՝ միջին կշռված ժամկետով 12 ամիս), - յուրաքանչյուր վերաֆինանսավորվող /Լրացուցիչ վարկի գումարի մեջ չներառված/ վարկի գծով մարված է առնվազն մայր գումարի 10%-ը, - վերաֆինանսավորվող վարկի/երից յուրաքանչյուրի գծով ժամկետանց օրերի քանակը չի գերազանցում 5 օրը, - Վարկառուի /ներառյալ համատեղ տնտեսություն վարող անձանց/ վերջին մեկ տարում ստացած վարկերի քանակը չպետք է գերազանցի 5-ը:	
	Վերոնշյալ պայմաններից շեղումների առկայության դեպքում վարկը ենթակա է տրամադրման ֆինանսատնտեսական ցուցանիշների վերլուծության հիման վրա: Լրացուցիչ վարկի գումարի միջոցով ևս վերաֆինանսավորում իրականացնելու պարագայում, սույն կետում նշված պահանջները չեն կիրառվում տվյալ վերաֆինանսավորվող վարկի նկատմամբ:	

	Ընդ որում, նոր տրամադրվող վարկի (այդ թվում՝ լրացուցիչ վարկի գումարը) սպասարկման գծով ամսական մարման գումարը չպետք է գերազանցի վերաֆինանսավորվող վարկի գծով վերջին 12 ամիսներին իրականացված միջին ամսական մարումների գումարի մեծության 115%-ը (կիրառելի է այն պարագայում, երբ վերաֆինանսավորման պարագայում չի իրականացվում ֆինանսատնտեսական վերլուծություն):
Վարկառուի (նաև իրավաբանական անձի մասնակիցներ/բաժնետերեր, իրական շահառու) նկատմամբ պահանջներ	Վարկային պատմություն. ✓ Վերջին 12 ամիսների ընթացքում դասակարգման բացակայություն և/կամ ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը: Հանրագումարային 15 օր և ավել ժամկետանցի պարագայում Բանկի կողմից կարող է պահանջվել ֆինանսատնտեսական ցուցանիշների վերլուծություն: ✓ Գործող ժամկետանց պարտավորությունների բացակայություն:
Մարման եղանակ	✓ Անուիտետային /մայր գումարի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ վճարում/ ✓ Դիֆերենցված/ մայր գումարի ամենամսյա հավասարաչափ և տոկոսագումարի ամենամսյա վճարում/ ✓ Անհատական վճարումների ժամանակացույց՝ կախված բիզնեսի առանձնահատկություններից (ներկայացնելով վերաֆինանսավորվող վարկերի մարման ժամանակացույցերը): Մարման եղանակը՝ ըստ հաճախորդի ընտրության:
ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ, ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ	
Վարկի տրամադրման և սպասարկման վճար	Չի սահմանվում
Ժամկետանց մայր գումարի տույժ	0.1% օրական
Ժամկետանց տոկոսի տույժ	0.13% օրական

Վարկի վաղաժամկետ մարման տույժ	Վաղաժամկետ մարվող գումարի 5%-ի չափով: Կիրառելի է 5,000,000 ՀՀ դրամից ավելի պայմանագրային գումարով վարկերի դեպքում:	
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ		
Ապահովման միջոց	Միայն երաշխավորությամբ ապահովված վարկեր (այդ թվում լրացուցիչ վարկի գումարը)	Անշարժ գույքի կամ այլ գրավով ապահովված վարկեր վարկեր (այդ թվում լրացուցիչ վարկի գումարը)
	Վարկի ապահովման միջոց է հանդիսանում. 1. 1,000,000-3,000,000 ՀՀ դրամ գումարի վարկի դեպքում՝ առնվազն 1 ֆիզիկական անձ (18-65 տարեկան): 2. 3,000,001 - 10,000,000 ՀՀ դրամ գումարի վարկի դեպքում՝ Առնվազն 2 ֆիզիկական անձանց (18-65 տարեկան) երաշխավորություններ: ✓ Երաշխավորներից առնվազն մեկը պետք է հանդիսանա անշարժ գույքի սեփականատեր կամ ապահովված լինի գրանցված աշխատավարձով, ✓ Երաշխավորներից յուրաքանչյուրի վերջին մեկ տարում ունեցած ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը:	Վարկի ապահովման միջոց է հանդիսանում Անշարժ գույք: Գրավի չափանիշները սահմանված են համաձայն Հավելված 1-ի: Երաշխավորություն/ներ. ✓ Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների դեպքում հիմնադիրների և իրական շահառուների անձնական երաշխավորություններ, ✓ Անհատ ձեռնարկատերերի դեպքում իրական շահառուն երրորդ անձ հանդիսանալու դեպքում՝ իրական շահառուի երաշխավորություն: Վարկային Կոմիտեի որոշմամբ կարող են նախատեսվել նաև այլ ապահովման միջոցներ:
Վարկ/ Գրավ առավելագույն արժեք	Համաձայն Հավելված 1-ի	
Գրավի գնահատում	Գրավը ենթակա է գնահատման Բանկի հետ համագործակցող գույքի գնահատում իրականացնող անկախ կազմակերպության կողմից:	
ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ		

Վարկի տրամադրման վերաբերյալ որոշման կայացման ժամկետ	Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում մինչև 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:
Որոշման մասին տեղեկացման ժամկետ	Որոշման կայացումից հետո մինչև 1 (մեկ) աշխատանքային օր:
Վարկի տրամադրման ժամկետ	Պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց և գրավի իրավունքի պետական գրանցումը իրականացնելուց հետո՝ մինչև 1 (մեկ) աշխատանքային օր:
Որոշման վավերականության	30 աշխատանքային օր Ընդ որում, Բանկը իրավասու է մերժել վարկի տրամադրումը, եթե փոփոխվել են վարկի տրամադրման դրական որոշում կայացնելու համար էական համարվող պայմաններից որևէ մեկը:

* Վերաֆինանսավորման ենթակա են նաև այն սպառողական վարկերը, որոնք տրամադրվել են գյուղատնտեսական նպատակով: Վերջիններս կարող են վերաֆինանսավորվել միայն Լրացուցիչ վարկի գումարի միջոցով:

** Արտարժույթային, այդ թվում՝ միաժամանակ տարբեր արժույթներով (ներառյալ՝ ՀՀ դրամով) վարկերի՝ դրամային վարկով վերաֆինանսավորելու դեպքում տարեկան անվանական տոկոսադրույքը սահմանվում է 15%, անկախ վարկի ապահովման միջոցից:

Այլ ֆինանսական հաստատությունից տեղափոխվող վարկերի միջին կշռված անվանական տոկոսադրույք -2% տարբերությունը 21.50%-ը գերազանցելու պարագայում տարեկան անվանական տոկոսադրույքը սահմանվում է 21.50%:

Միջին կշռված տոկոսադրույքի և ժամկետի հաշվարկման համար հիմք են հանդիսանում տեղափոխվող վարկերի մնացորդները և փաստացի սպասարկված ժամկետները: Միջին կշռված տոկոսադրույքի հաշվարկման պարագայում իրականացվում է տոկոսադրույքի տասնորդական կլորացում:

Վերաֆինանսավորվող վարկը/վարկերը մինչև «Ֆասթ Բանկ» ՓԲԸ տեղափոխվելը կարող են սպասարկված լինել 1-ից ավելի ֆինանսական հաստատություններում:

*** Լրացուցիչ վարկի գումարը կարող է տրամադրվել ինչպես վերաֆինանսավորման վարկի հետ միասին՝ 1 վարկի միջոցով, այնպես էլ որպես առանձին վարկ՝ սույն ամփոփագրի համաձայն սահմանված պայմաններով: Ընդ որում, վերաֆինանսավորման նպատակով տրամադրվող վարկի և լրացուցիչ վարկի հանրագումարը չի կարող գերազանցել սույն ամփոփագրի համաձայն սահմանված վարկի առավելագույն գումարի սահմանաչափը:

**** Սահմանված պայմանը կարող է չպահպանվել, եթե վարկային հայտի ներկայացմանը նախորդող 6 ամիսների ընթացքում Բանկի կողմից Հաճախորդին տրամադրվել է առնվազն 1 գյուղատնտեսական վարկ՝ ֆինանսատնտեսական ցուցանիշների վերլուծության հիման վրա:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունները և դրանց վճարներն են.

1.1 Անշարժ գույքի՝ այդ թվում հողամասի, գրավադրման դեպքում.

- ✓ Անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10,000 ՀՀ դրամ,
- ✓ Գրավի պետական գրանցման վճար՝ 26,000 ՀՀ դրամ,
- ✓ Նոտարական վավերացման վճար՝ 16,000-20,000 ՀՀ դրամ:
- ✓ Գույքի գնահատման վճար՝ 15,000-25,000 ՀՀ դրամ:

2. Նախքան պայմանագրի կնքումը Բանկը վարկառուին և երաշխավորին կտրամադրի վարկի էական պայմանների անհատական թերթիկը, որում ներկայացված են վարկառուին տրամադրվելիք վարկի էական պայմանները:

3. Անկախ սույն պայմաններում նշված 3-րդ անձանց վճարների դրույքաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել:

4. Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 1/365 հարաբերակցությամբ, իսկ նահանջ տարվա համար 1/366 օրվա հաշվարկից:

5. Վարկը տրամադրվում է անկանխիկ եղանակով՝ Բանկում բացված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

6. Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանվում է համաձայն [Հավելված 2-ի](#), իսկ Բանկի հետ համագործակցող անկախ գնահատողների ցանկը՝ [Հավելված 3-ի](#):

7. Վարկը տրամադրվում է Բանկի «Հին Նորք», «Շրջանային», «Ավան», «Դավթաշեն», «Մովսես Խորենացի», «Սեբաստիա», «Կոմիտաս», «Բաղրամյան», «Թումանյան», «Էրեբունի», «Հարավ-Արևմտյան», «Շենգավիթ», «Ալեք Մանուկյան», «Տիգրան Մեծ», «Արմավիր», «Արտաշատ», «Մասիս», «Գորիս», «Գյումրի», «Վանաձոր», «Աբովյան», «Հրազդան», «Էջմիածին», «Մարտունի», «Սևան», «Գավառ», «Անի», «Աշտարակ», «Իջևան», «Վեդի», «Արթիկ», «Եղեգնաձոր», «Կապան», «Չարենցավան», «Ալավերդի», «Քաջարան», «Սիսիան» և «Նոր Նորք» մասնաճյուղերում:

8. Վարկի տրամադրման դրական որոշման կայացման գործոններն են.

- ✓ Վարկառուի, Երաշխավորի և Գրավի համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:

9. Վարկի մերժման գործոններն են.

- ✓ Վարկառուի, Երաշխավորի և/կամ Գրավի անհամապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:

✓ Վերջին 12 ամիսների ընթացքում ստացված վարկերի քանակը 10-ից ավել լինելու պարագայում վարկային հայտը կարող է մերժվել:

10. Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար, որպես կանոն, Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկին Վարկային պայմանագրով սահմանված վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, սպասարկման վճարների, տոկոսների (առկայության դեպքում), Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:

11. Ոչ ֆինանսական ծառայությունների սակագները, այդ թվում քաղվածքների, պայմանագրերի կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքում՝ <https://www.fastbank.am>, ինչպես նաև տեղադրված են Բանկի մասնաճյուղերում:

12. Երաշխավորն իրավունք ունի.

12.1. Ցանկացած ժամանակ վարկատուից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին:

12.2. Վարկառուից հետ ստանալու իր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

12.3. Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները համաձայն քանկում գործող [Ոչ ֆինանսական ծառայությունների սակագների](#):

13. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ՆՎԱԶԵՑՎՈՒՄ ԵՆ՝ ՎԱՐԿԻ ՄՆԱՅՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՏՈԿՈՍՆԵՐԸ, ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ (ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ), ԻՍԿ ՏՈՒՅԺԵՐԸ/ՏՈՒԺԱՆՔՆԵՐԸ (ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ/ԿԱՄ ԱՅԼ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԱՑՎԱԾ ՀԱՇՎԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ԳՈՐԾԱՐՔԻ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ, ԳՐԱՎԱԴՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԴԻՄԱՑ 3-ՐԴ ԱՆՁԱՆՑ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ:

14. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՒՆԱԳԱՆՁՎԵԼ:

15. ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍ Է ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՀԱՆՋԻ ԵՎ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻՑ, ԱՊԱ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱԿԱՍ ԳՈՒՄԱՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ:

16. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅՐ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՁ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

17. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ www.fastbank.am:
18. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ»՝ www.fastbank.am:
19. ԲԱՆԿԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ, ՈՐԸ ՉՊԵՏՔ Է ԳԵՐԱԶԱՆՑԻ ՄԵԿ ԱՄԻՍԸ, ՎԱՐԿԱՌՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԲԽՈՂ ՍՊԱՌՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ:
20. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՁԵՋ ԿՏՐԱՄԱԴՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ՝ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՄ ԿԱՊԻ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՈՎ:
21. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵՋ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է www.fininfo.am:
22. ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԻՑ ՊԱՀԱՆՋԵԼ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎԱՏԱՆԱԼՈՒ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՋՐԿՎԻ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔԻՑ:
23. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: